ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՔՍԻՏՈ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
3	Աթոռ աշակերտական՝ 1-4 դասարանների համար՝ Աշակերտական աթոռ՝ մետաղական հիմքով, բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորվող: Նստելատեղը և մեջքի հենակը պետք է պատրաստված լինեն նրբատախտակից՝ 10մմ հաստությամբ, գույները և չափերը՝ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. 12-Ն հրամանի և ԳՈՍՏ 11015-93 համապատասխան: Աթոռի նստելատեղի չափսերը՝ 290x330մմ, նստելատեղի մակերևույթը պետք է ունենա (D=170մմ) փոսիկ, փոսիկի խորությունը 10-12մմ: Նստելատեղի նրբատախտակը աթոռի մետաղական կմախքի վերևի շրջանակի հետևի և կողային երկու կողմերից պետք է դուրս գա համապատասխանաբար 25մմ, իսկ դիմացի եզրից՝ 50մմ, որը պետք է դեպի ներքև կորացնել 90º-ով, (R=20-50 մմ): Նրբատախտակի եզրերը պետք է լինեն ողորկ, մշակված: Աթոռի մեջքի հենակի չափսերը՝ 290x120մմ, հենակը ողջ երկարությամբ պետք է դեպի ներս աղեղաձև կորացնել (R=600մմ): Նրբատախտակը կմախքին միացվում է միջանցիկ հեղուսե մանեկային ամրացումով: Նրբատախտակի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝ նրբատախտակի հարթության վրա: Աթոռի կմախքը պետք է լինի մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 240x255 մմ, որին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը: Աթոռի 2 զույգ մետաղական ոտքերից յուրաքանչյուրը իրենցից ներկայացնում է կարգավորվող բարձրությամբ երկու տրամաչափի քառանկյուն խողովակից՝ արտաքին և ներքին (միջուկ), բաղկացած կոնստրուկցիա: Արտաքին խողովակի չափերը՝ 25x25x2.0մմ, բարձրությունը՝ 195մմ: Ներքին խողովակի՝ միջուկի չափերն են՝ 20x20x2.0մմ, բարձրությունը՝ 195մմ:

	Աթոռի ոտքերի արտաքին խողովակները զոդման եղանակով ուղղահահայց միացվում են գետնին հորիզոնական դիրքով դրված մետաղական քառակուսի խողովակից պատրաստված 280 մմ երկարությամբ հենակին, չափսերը՝ 25x25x2.0մմ: Հենակին միացվող 2 ոտքերի միջև հեռավորությունը՝ 100մմ: Հենակի եզրեը պետք է խցանված լինեն պլաստիկե բաց գույնի խցաններով՝ 5-6 մմ հաստությամբ: Աթոռի ոտքերը պետք է ունենան 40մմ քայլով բարձության կարգավորման 3 հնարավորություն, որոնք յուրաքանչյուր կողմից ֆիքսվում են 2 հատ հեղուսե մանեկային կապով: Աթոռի նստելատեղի բարձրությունը հատակից մինչև նստելատեղի երեսը՝ 260-380մմ, իսկ հատակից մինչև մեջքի հենակի վերևի եզրի բարձրությունը 500-620մմ: Աթոռի նստելատեղի և մեջքի հենակի կազմած անկյունը պետք է լինի 95-130º, իսկ հանգույցը՝ կորացվի R= 60 մմ շառավղով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ ներկանյութով: Նմուշը /նմուշ-3/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ 365 օր: երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±5%:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСИТО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
3	